


ՔԱՆՈՒՄԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳՈՑ ՀԱՄԱՐ
Տարեկան \$1.50
Վեցամսեայ 0.85
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Պրանք
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Խմբագրութեան գրկուած նամակ կամ ծրար եւ չեն վերադարձուիր:

Գին 3 ՍԷՆՏ:




Չ Ա Յ Ե

Հայրենեաց

ՇԱՐԱԲԱԹԵՐՈ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն, Գ Ր Ա Կ Ա Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն



WZAIN
HAIRENOATL
AN ARMENIAN WEEKLY.
16 MECHANIC STREET,
WORCESTER, MASS.

ՀԱՍՑԷ
AMERICAN HAI PUBLISHING Co
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at Worcester, as Second-Class Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ՓՈՒՆՈՒՄՏԸ

Շատ կը ցուինք որ այս անգամ ալ Ձայն Հայրենեացի երկու էջերը լեցուցինք գրեթէ պարագլուխներով: Այո՛ ինչ բան որ օգուտ չունի պարագլուխ է. և ալ համոզուեցանք թէ ամէն ինչ որ խօսուի մեր Դաշնակցական Հայրենակիցներուն՝ օգուտ չունի, եթէ քարերն անգամ լեզու ելլեն և խօսին յանուն Հայրենեաց, կրկին Դրօշակի անպայման հլու հետեւողները ջուրի ձայնի մտիկ ընելու պէս անզգայ պիտի կենան. և իրենց յախտնական յանկրկողքը պիտի աղմկեն հրապարակը. պիտի վերադառնան արդարութեան համար բարատող ամէնհայ սիրտ, պիտի անարգեն քոյր կուսակցութիւնը. պիտի արհամարհեն ժողովուրդի ձայնը և բաղձանքը. ուրի տակ պիտի առնեն ազգային կենսական շահերը, ու իրենց ԿՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ԵՍՏՐ աւազի բյուրեղու պէս մեր ուսերուն վրայ պիտի դնեն որ ստանինք. իրենց «Չինտոսական բռնակցութիւն» իրենց անգամ ըր բերաններէն հանած «Վճիռ»ին և իրենց «Պարտի կեդր.» կոմիտէին արժանապատուութեանը՝ առջև կը պահանջեն որ ամբողջ Հայութիւնը կքի, խոնարհի և այդ աւազի բյուրեղերը ուսերուն վրայ վերցունելով տանի...!

«Դաշնակցութեան կամքը» ահա հոգ կակի և հոգ կը վերջնայ ամէն բան առոնց համար, «Դաշնակցականութեան կամքը»ին առջև ամէն մարդկային իրաւունք և ամէն ազգային պահանջ կը շքանան. «Դաշնակցութեան» կամքը, էն մեծ ու նուիրական բան գոյութիւն չունի եղեր ազգին մէջ. աշխարհի մէջ, տիեզերքին մէջ...:

Անօգուտ չէ՞ ուրեմն կանգնելու ու առանկներուն խօսք խօսիլ. ժամապահանութիւն չէ՞ պէտք չէ՞ մի անգամ ընդմիջու առանկներուն ընկ. «Ալ ձեզի հետ գործ չունինք. դուք չապացանք...»

Պատուոյ առանկի համար «Մարտի» պաշտօնական հրահրին «Դրօշակ» կը պատասխանէ թէ Հնչակեան կուսակցութեան որ և է գիմումին չպիտի պատասխանեն, որովհետև անոր կազմին չեն հաւանում: Ի՞նչ?

Բայց ո՞վ իրենց, (Դաշնակցականները) «Կազմին հաւանում» է. որ իրենք ալ Հնչակեաններու «Կազմին», չեն հաւանում. նա մանաւանդ «Կազմին», հաւանելու կամ չհաւանելու ինչ կայ. պարտք մը ունին վճարելիք և Հնչակեան կուսակցութիւնը և անոր հետ ազգը այդ պարտքը կը պահանջեն Դաշնակցութենէն:

Ինչ՞ պիտի խորհէին մեր Դրօշակեան եղբայրները, երբ տեսնէին պարտատէր մը որ իր պարտապանէն առնելիքը կուզէ և վերջինը կըսէ առաջինին՝ չպիտի վճարեմ, ես քեզի պարտք չունիմ, որովհետև ես քու կազմը չեմ սիրում. մէջքը կուզէ. քեզը երկար է.

աչքերդ փոսն են ընկնում. ևն ևն ինչ պիտի բէր դատարարը երբ անոր առջև պարտապանը կրկին իր գիտը, «Պարտք չունիմ. չեմ վճարեր, որովհետև չեմ սիրում, չեմ հաւանում դրա կազմին»:

Մենք ալ նոյնը կըսենք «Դրօշակ»ի պարտքը վճարելիք եւ նորէն ըսելիք կայ. մըդ չեմ հաւանում...: Միթէ թիւրք կառավարութեան «Կազմին հաւանում», էիք որ պարծանքով կը յիշէք թէ մեր փառքի օրերում անոր հետ բանակցութիւն ստուգ էիք: Եթէ ինչդիրը նոյն իսկ «Կազմի հաւանելու կամ չհաւանելու» վրայ եղած ըլլայ. միթէ Հնչակեան կուսակցութիւնը թիւրք կառավարութեան չափ ալ արժէք չունի մեր աչքին առջև իր կազմով:

Միշտ կը լսէինք որ կըսէին թէ «Մարտի» կոչէ «Դրօշակ»ը փախուստ պիտի առայ իսկ փախուստի այդ կերպը մաքրենէս չէր կրնար անցնիլ:

Պիտի ջանանք այդ փախուստի ալ ձեռքերնիս լուսնալ և Ձայն Հայրենեացը լեցունել օգտակար ՚իւթերով:

Մ. ՆԱՀԱՆԳՈՑ ԸՆԾՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամերիայի մէջ երկու տարու զուտակցութիւններ կան, որոնց միտն կամ միտն նախագահական ընտրելիները կընտրուին: Առոնք կը կոչուին Տիմօթեոս և Րիփըպլիքեան:

Վերջերս երկու կուսակցութիւններն ալ իրենց ընտրելիները նշանակելու համազումարներն ունեցան. առաջինք Գենուսա Սիթիի և վերջինք Ֆիլադելֆիայի մէջ:

Տիմօթեոսներու ընտրելին է Տ. Պերրայան, Արծաթի մարտը, և Րիփըպլիքեաններու ընտրելին եղած այժմու նախագահն Մաքքեյիլի, վերնադասի, արուն հետ փոխ նախագահի համար որդուցու նիւ Երթի կառավարիչն Րօզվելթ Գիւպի Սանճուան-Հիլին հերոսը:

Նախ գաղափար մը տանք մեր ընթերցողներուն թէ Ամերիայի նախագահները ինտոր կնտուին: Ամեն նախագահ իր մեծութեան համեմատ այս ինչ չափ թուով ընտրողներ կուսենայ, որոնք այս կամ այն կուսակցութեան կողմանէ կը գումարուին այն ինչ տեղը և կը նշանակեն իրենց կուսակցութեան ընտրելիները. նախագահու և փոխ նախագահու:

Ի վերջոյ այդ ընտրելիները կ'ենթարկուին ընդհանուր ժողովուրդի քուէարկութեանը, որ առնեն քուէից մեծամասնութիւն շահողները կըլլան նախագահ:

Տիմօթեոսներու բեմը երեք զըլխաւոր խնդիրներու վրայ կը կանգնի. Ա. Հակա-կայսերականութիւն, Բ. Հակամեծամասնութիւն, Գ. Արծաթի ազատ դրամ հատութիւն:

Րիփըպլիքեանները կայսերականու-

թեան տեղ ծուլականութիւն կը դաւանին. մենալաճառին իրենք ալ ինքզինքնին հակառակ կը յայտարարեն եւ կը հակառակին ազատ դրամ-հատութեան:

Ծաւալականութեան եւ կայսերականութեան մասին արդէն գրուած է «Ձայն Հայրենեաց»ի էջերուն մէջ:

Ազատ դրամ հատութեան խնդիրը այն է թէ երբ արծաթի ալ ոսկիին պէս որոշ սթանտարտ ունենայ և ազատօրէն շրջաբերութեան հանուի, երկիրը աւելի հարուստ կըլլայ, հրապարակին վրայ առատ դրամ կը գտնուի և գործաւորները կ'օգտուին անկէ:

Արծաթի խնդիրը նոր չէ ու ոչ ալ Պրայանէն ծագած: Առեւնէ մը ի վերէ որ նոյն խնդիրը եւրոպայի մէջ ալ կը յուզուի: Րիփըպլիքեանները կըսեն թէ, եթէ արծաթին սթանտարտը ամբողջ աշխարհէն չ'որոշուի, եթէ անոր վրայ միջազգային համաձայնութիւն մը տեսնուի, եթէ իրենք միայնակ արծաթը որոշ սթանտարտ վրայ գնեն. այն առնել, որովհետև արծաթի և ոսկիի այս երկրին մէջ ստացած համեմատական արժէքը ուրիշ երկրներէ տարբեր պիտի ըլլայ, ուր միայն ոսկին է որ որոշ սթանտարտ ունի. որովհետև արծաթը միջազգային վարկ չունի. այս երկրին դրամական վարկը աճուի կերպով պիտի կոտորուի և վնասուի:

Րիփըպլիքեանները կը ցուցնեն թէ նախ Մաքքեյիլի օրով Մ. Նահանգները ինչ մեծ յառաջդիմութիւններ ունեցեր են: Մ. Նահանգացի դրօշակը, բանակը և նաւատորմը այս օր աշխարհի պատկառանքը գրուած եւ օտար երկիրներու մէջ անհամեմատ ընդարձակ շուկաներ բացուած են այս հատարակապետութեան առջև. կը ցուցնեն թէ Մ. Նահանգացի կառավարութեան 107 տարիներու կենցաղին մէջ ներմուծութիւնը վրայ արտածութիւնը առաւելութիւնը մինչեւ ասկէ 3 տարի առաջ երեք անգամ չէ 383,028,997 տարբեր. մինչ նախ Մաքքեյիլի օրէն ի վեր այս երկրին արտածումի առաւելութիւնը ներմուծումներէն 1,483,537,098 տարբեր կանցնի, կըսեն այդ ամենի զարգացումը կը պարտին նախ. Մաքքեյիլի իմաստուն քաղաքականութեան, որոյ պատճառաւ այս անցեալ 3 տարիներու մէջ այս երկրին գործերը այսքան լաւացած են: Եւ կը յաւելուն թէ, եթէ այդ քաղաքականութիւնը քանի մը տարի ևս շարունակուի, ալ յայտնի է թէ արտածութիւնը կ'սկսայական աճումը որքան ևս առաւել պիտի բազմապատուի, և որով որքան աւելի պիտի բարձուի գործաւորներու վիճակը:

ՌՍԻՍԻԱ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆ

Չինաստանի գործերուն մէջ Ռուսիա ճիշտ այնպէս երևան կուգայ, ինչ-

պէս եղած է և է թիւրքական գործերուն մէջ:

Ռուս պաշտօնեաներ և մամուլը պարզապէս կը յայտարարեն թէ, Չինական դժուարութեանց կարգադրութեանը մէջ Ռուսիա կը գործակցի միւս պետութեանց հետ մինչև աստիճան մը, որով անդին այնոց շահերը իւր շահերուն հակառակ կուգան, ուր կանգ պիտի առնէ. այն է. երբէք չպիտի թուլատրէ որ Չինական պետութեան զուլիւն վրայ որ և է փոփոխութիւն ըլլայ, կամ երկրին մէջ վարչական բարեփոխումներ կատարուին: Ըսելէ, Ռուսիա կուզէ որ ինչպէս թիւրքիա, նոյնպէս և Չինաստան կառավարական անբարոյականութիւնով վարակուի, անիշխանական հրդեհովը հրկիզուի, որուն մոխիրներուն վրայ կանգնէ իր աշխարհակալական առաջադրութիւնները: Ինչպէ՞ս վանի հռչակաւոր հերքեհին աստիճան տեղոյն վային հրէջ մեքենաներուն մէջ քարիւղ լեցունել տալով կրակը աւելի կը բարձրացնէր. անանկալ Ռուսիա կը գործակցի միւս պետութիւններուն՝ Չինաստանի քաղաքական հրկիզութեան վրայ քարիւղ նետելով՝ ոչ թէ ջուր: Կըսուի թէ միջազգային բանակին մէջ եղող ռուս զինուորները կը յարձակին նոյն իսկ հանդարտ չինաստանցիներու վրայ, կըսուեն զանոնք, կաւարեն անոնց խնուրները, որպէսցի խաղաղ տրամադրութիւն ունեցողներն ալ գրգռուին և միանան մոլեգնեալ ամբողջին: Յրանաւ ինքզինքը հակառակ կը յայտարարէ Ռուսիայ այդ վարմունքին, ըսելով թէ, Չինաստանի խնամակալ կայսրուհին դահլեյկէց ըլլալու է:

Կըսուի թէ Ռուսիա սկսած է նշաններ ցոյց տալ թէ կը պատրաստուի միայնակ և անկախօրէն քարիւղ ֆեքիւնի վերայ և գրաւել զայն:

Ռուսիոյ Չինաստանի մէջ ալ ի յայտ բերած իր այս վարմունքներէն որքան դատար առնելու ենք թէ Հայերս և թէ թիւրք Ազատականները:

Ո՞վ գիտէ թէ որքան անգամներ մեր յեղափոխական շարժմանց զսպանակին վրայ Ռուսիոյ ձեռքերը խաղցեր են, ինչ բան մեզ կ'ապահովէ թէ այսուհետեւ մեր յեղափոխական գործածութիւնները ըստ ամենայնի ազատ պիտի ըլլան Ռուսական թագուն ներգործութիւններէ. ինչո՞ք զարմանալ թէ շատ անգամ Ռուսա-Հայ յեղափոխականներ, յանգէտքս Ռուսիոյ էնթրիքներովը շարժեր են. եւ ուրախացեր ալ թէ ինտոր կը յաջողին Ռուսիոյ քիւն տակէն անցնիլ դառնալ առանց նկատուելու... կամ թէ կարծեր են որ Ռուսիա լաւ է վերաբերուում:

Օտար ազգաց ճարպիկ էնթրիքներուն խաղալիք չլլալու ապահովութիւնը կուսենանք մի միայն ամենափորձ և կարող անձնաորութիւններէ կազմուած ԱՉԳԱՊԱՀՊԱՆ ՄԱՐՄԻՆԻ մէջ, ուր եռանդին կրակը կը սահմանուի խեղճի ջերմոցին մէջ. ու ալ մեր կրակովը մեր սուները չենք վառեր՝ անանկ որ մեր մոխիրներուն վրայ օտարները իրենց սուները շինեն:

Գ. Գ. Զ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՆՈՐ-ԿԵԱՆՔԷՆ ԿՐ ՔԱՂԱՆՔ ՀԵՏԵՆԵԱԼԸ

Օրմանեան Պատրիարքը նորէն աթոռ վերադարձաւ: Կ. Պոլսէն Քիւրճեքի գործակալութեան Մայրն 24 թուականով հեռագրի մը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ պատրիարքական տաղանակին վերջնական պարագաներուն վերջապէս:

Կ. Պոլսի Մայրն 24

«Հայոց պատրիարքը այսօր Եւրոպայի Բեռլին կանչուեցաւ: Իրեն հաղորդեցին իրատէ մը որ հետեւեալ երեք կետերը կը շնորհէ:

1. Բացառիկ կերպով Հայոց համար տեղի ունեցած դժուարութեանց դադարում:

2. Թիւրքիոյ բոլոր Հայոց վրայ Պատրիարքանին իրաւունքներուն պահպանումը, Սիւրի կաթոլիկոսին ընտրութիւնն ալ մէջը ըլլալով:

3. Գժազդութիւններ կողմ Հայոց վերականգնանքի յետաձեռնող տարբերու շնորհարարներու վճարումի համար: Իւրութիւններ:

«Արիւ իրատէ մըն ալ կը հրամայէ Պատրիարքին վերատեսնել իր եկեղեցական պաշտօնը: Պատրիարքը զուտարեց Հայոց ազգային ժողովը (այսինքն կրօնական և քաղաքական ժողովները) անոնց հաղորդելու համար սուլթանին հրամանները: Հայոց Պատրիարքարանին երկու ամիսէ ի վեր սազանալը վերջացած կրնայ համարուիլ:

Բազմաթիւ նշաններ կը հաւաստեն թէ Եւրոպա Հայկական խնդրով վերստին զբաղելու տրամադրի կերեւի: Տէյլի Քրօնիկը խմբագրականով համառօտ թայտ յատեալ գաղափար մը կուտայ Հայաստանի բարեկարգութեանց խնդրին համար Եւրոպայի նոր ձգտումին վրայ: «Նշանակութեան շատ արժանի իրողութիւն մըն է որ, կրնայ արժանապատիւ մեծ թրակները իր Մայրն 26 թուին մէջ, այն պատիկ զիջումներու շնորհով զոր սուլթանը Հայոց Պատրիարքին միջոցաւ երէկ իր հպատակ Հայոց ըրաւ, սեղի կուտանար ճիշդ այն պահուն երբ առական կառավարութիւնը ստիպուական պահանջումներ կընէ, և կը ծանուցուի թէ Գերմանիոյ, Աւստրիոյ և Անգլիոյ զինուորական կցորդները «Գերմանական սուլթան մըն պիտի ընեն Հայաստան: Այս վերջին թիւրքիայէն հասած լուրերը քիչ մը միջադէպ են, ու սուլթանին աւելի կամ նուազ խոստումը կացութեան վրայ զգալապէս չ'ազդէր: Բայց այն երեք իրողութիւնները զոր կը յիշատակենք, երբ մէկտեղ ընենք, ակնհայտ ցոյց կուտան թէ Հայաստանի համար պետութեանց շահագրգռումը կը սկսի վերականգնանալ, և թէ սուլթանը իսկ հեմութիւն կը համարի Պատրիարքարանին հետ կարգադրութեան մը յանգիլ: Եւրոպա պարտականութիւն մը ունի թիւրքիոյ մնացող հայերուն: Եւ թէ Գերմանիոյ զինուորները համաձայն են իրենց պարտքը վճարելու յարմար եղանակին վրայ, սուլթանը իր զէնքը պիտի տեսնէ կացութիւն մը որ շատ արթնք է երեք չորս ամիս առաջ եղածէն:»

Պոլսի ուսանական դեպիւնտները սկսած պահանջուտ երևնալ Հայոց խնդիրներուն համար: Պ. Արիւնիկէֆ, Ռուսիոյ դեսպանը ինքզուրիկ երթալէն առաջ Օրմանեան պատրիարքին առած այցելութեամբը, որ մէկ ու կէս ժամ տևած էր, յայտնած էր ռուսիոյ արքայազնի պատրիարքութիւնները Հայոց համար: Հիմակ Եւրոպա հասած բոլոր տեղեկութիւնները կը համաձայնին պատրիարքին պահանջումներուն սուլթանին զիջողութիւնը վերադարձիլ այն երկրներէ զոր Ռուսիա կ'ազդէ թիւրքին:

Պոլսի ուսանական դեպիւնտները սկսած պահանջուտ երևնալ Հայոց խնդիրներուն համար: Պ. Արիւնիկէֆ, Ռուսիոյ դեսպանը ինքզուրիկ երթալէն առաջ Օրմանեան պատրիարքին առած այցելութեամբը, որ մէկ ու կէս ժամ տևած էր, յայտնած էր ռուսիոյ արքայազնի պատրիարքութիւնները Հայոց համար: Հիմակ Եւրոպա հասած բոլոր տեղեկութիւնները կը համաձայնին պատրիարքին պահանջումներուն սուլթանին զիջողութիւնը վերադարձիլ այն երկրներէ զոր Ռուսիա կ'ազդէ թիւրքին:

Եւրոպայի Հայոց հոգեւոր հովիւ իւթիւնեան Տ. Գէորգ Եպիսկոպոս որ այս միջոցին Բարթի կը գտնուի, աջակցութեամբ Բիպարեան Տ. Վովաչապուհ քահանայի թիւրքին:

Հանայի, յաջողութիւն Բարթի մատուցելու շնորհիւ յանձնարարով մը կազմել: — Վիէնայի Միթիարեան Միարանութեան մէջ ծագած երկպառակութիւնը հետզհետէ սուր կերպարանք մը առնելու վրայ է: Պոլսի, Իզմիրի, Ալաշքերտի վիէնայեան Միթիարեան վանատունները միացած են Վիէնայի մայր վանքին դէմ և մէկէ աւելի վարդապետ թողած ու հեռացած են Վիէնայէն, և կիմացուի թէ այդ վարդապետներէն մին. Միթիարեան արշիպիսկոսի կղզիներէն միոյն մէջ Վիէնայէն բոլորովին անկախ զատ հաստատութիւն մ'ալ հիմնեց: Արդ այս վէճը քննելու համար յատկապէս վատիկանէն պաշտօն տրուած է Ռուսիան Գերապայձառին, որ Հռոմի Աթոռին քով Հայ-Կաթոլիկ Պատրիարքութեան ներկայացուցիչն է և համարուող, իբրև մոլեռանգ Լատինասէր ու հակառակորդ Միթիարեաններու ու իրենց ուղղութեան:

— Տիգրիսէ կը ծանուցուի թէ Մայրն 8 ին տեղական նահանգային դատարանին մէջ քննուէր է Արաբիոյ, եկեղեցական կառուածներուն վէճը: Բողոքող կողմը եղած է Տիգրիսի Հայոց կոնսիստորիան, իսկ հակառակ կողմը կողմեան զարոյցական շրջանակի վերատեսչութիւնը: Այս կառուածները, որոնք հինգ զիւղեր կը պարունակեն, իրենց արժէքն է եղեր 50 հազար օսմ. լիւր: Երկու կողմէ ալ հաւատարմալ կը պնդեն եզր թէ այդ կառուածները իրենց կը վերաբերի: Դատարանը երկու կողմն ալ լսել է ներկայացուած վաւերագրերն ու վկայագրերը քննելէ յետոյ վճռած է որ այն կառուածները նոյնութեամբ եւ դարձուն են եկեղեցական պաշտօններուն (կոնսիստորիային):

— Պոլսի Ազգային Հիւանդանոցի հիմնարկութեան 68 րդ. տարեարձին առթիւ Համարձման օտոնին, Հիւանդանոցի մատրան մէջ հանդիսաւոր Պատարագ և Հոգեհանգիստ կատարուէր է Պէգճեան Յարութիւն ավարտի. Տասնեան, Պարեան և այլ բարեբարներու յիշատակին համար:

— Դավրիժ ի նպատակ հայ վարժարաններու տրուած թատերական ներկայացման հանդիսատես եղեր է նաև Պարսից գահաձառումը Մէհմէտ Ալի Իշխանը: Այդ ներկայացման արդիւնքը եղած է 2500 Ֆր:

— Պ. Եկտար Եսէնին արուեստակներէն արտահան մէջ իր ցուցադրած վորագրութիւնները գնահատուելով երորդ կարգի ոսկի շքադրամ մը ստացած է:

— Պոլսի ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան. ատենակալ Տ. Պատրիկ Կիւպէնկեանի Սերպիոյ արքայական թագովօ պատուանշանին հրամանատարութեան աստիճանը շնորհուէր է:

— Պ. Բանոս Թէրզէմէզեանի նկարները նկարչական ակադեմիոյ միջոցով մէջ առաջին մրցանակին արժանացեր են:

— Վիւնէնէ կայսեր աննական բժիշկ Տօք Պէրկիանի եղբայրը Հէր Պէրկիան, անցեալները Մէզլէ հանդիպելով տեղւոյն որբանոցին մէջ հիւր մնացեր է քանի մը օր, ուրից մեկնելով Տիգրիսեանկերտ գացած է հոն ալ որբանոց մը կազմակերպելու համար:

— Կիմանանք թէ Վիէնայի Միթիարեան Միարանութեան մէջ պատահուածներ աւելցեր են վերջին օրերս: Պոլսի զբոսնորդ երկրասարդ անդամներու և Վիէնա գտնուող երկրագոյն անդամներուն մէջ, Առաջինները Հռոմայ Աթոռին դիմած են բողոքելով երկրագոյններուն դէմ որոնց զուրկ կը գտնուի եզր Արքայապետ Արքանեան Արքեպիսկոպոսը:

Այս մասին կըսուի թէ Պոլսի հատուածը փախուցող է եզր վանական սովորութիւններուն մէջ պահել հայկական ձեւերը: Իսկ Վիէնայի մասը ընդհանրապէս Լատինացիներու հետամուտ է ամէն ինչ. և Վիէնայի վանքին մէջ պատարագ բոլորովին Լատինաձեւ ըրած են: փոքրիկ մատուռի մը մէջ միայն հայածե կը պատարագուի եղեր: Այս եղած է ներկայ անհամաձայնութեան բուն շարժառիթը: Եւ այդ պատահուածներուն պատճառաւ է որ Հանդէս Ամօրեայի Ապրիլ թիւը հազիւ հրատարակուած

մինչդեռ ամէն ամիս նանոնաւոր կերպով կելլէր սակէ առաջ: — 50 թիւը զինուորներէ ջակատ մը իւշ քիլիսէ համբաւաւոր Ս. Յովհաննէսի վանքը գրաւեր և անկից դուրս վանքեր է վարդապետ, քահանայ, կրօնաւոր ամէնքն ալ:

Պ. Յարութիւն Ռուսեան կը դրէ: Յունիս 18 ին մինչ Չարլը-Յաուելի ժողովուրդը Պընքըր Հիլի դիւցազնական ու յաղթական մարտին տարեդարձը կը սուէր, ցնծալին խանդավառումով, նոյն ատեն իտալացիներ իրենց կապիկները խաղցունելով փոյոցէ փոյոց դրամ կը մուրային, ու քանի մը հայեր ալ իրենց հայրենակիցներուն սնուկները կտարելով աւազակութեամբ կըզբազէին: Վերոյիշեալ հանդիսին օրը ժամը 2 ին Չարլ Յաուելի մէջ ընկող մեր հայրենակիցները մինչ գացեր հանդիսատես կըլլային զինուորական ՓԱԿՅՏ ին. անոնց սենեակները կը մտնեն հայեր, կը կտորեն անոնց 4 սնուկները արոց մէջ 50 օտարի չափ դրամ գտնելով կ'առնեն կանեթուութեան:

ՀԱՄԱՂՍՈՒՐԱՆ

Գրական և Գիտական (Ամսաթիւթ)

Իր անունին համեմատ Գրական և Գիտական ամէն կարգի խնդր վրայ գեղեցիկ ուսումնասիրութիւններ կը պատարանէ, հայ ընթերցասիրաց առձեռն համարարան մը ըլլալու հաւաստին կուտայ:

Այդ պիտի հրատարակութիւններու կարօտ են մանաւանդ այն ուսումնասիր երկրասարդները, որոնք բարձրագոյն դպրոց երթալու պատենութեան հոգի են: արտասիր կը մտղթենք որ «Համալսարան» ինչպէս նաև «Բանասէր» իրենց առաջադրման գլուխ գործոցին հասնին, զիտնալու է սակայն թէ ամէն հրատարակութիւն իր անձեմին քանակին ու որակին չափը կանէ բաժանորդներու թիւոյն և վճարման կանոնաւորութեան համեմատ: Հրատարակչիւնները տուտակալութիւն միջոցներ չունին և ուստի երևակալութիւնով ոչ կուպին ոչ ալ կը ճոխանան: Մտաւ այնքան կը մեծանայ և այնքան կարգաւարտ որքան պարտէ չողը որուն մէջ տարածած է իր արտօսները: նոյնպէս են լրագրիւններն և ամսագրիւններն իրենց ընթերցողներուն վերաբերմամբ:

Հասցէն է
REDACTION DU HAMALSARAN,
3 Place Monge,
Paris, France.

« Հ Ա Յ Ի Ն »

Շարաթաթիւթ. Ազգային և Զուեչտական:

Այս երգիծախառն շարաթաթիւթը, իր գնահատելի բնորոշութեանցը համար մասնաւորապէս յանձնարարելի է:

Բաժնեկիցին է՝ տարեկան 10 Ֆրանկ Հայ Լրագրութեան հրատարակի վրայ Հայ լիւրի պէն ապակալ ու խարազան թերթի մը պէտքը զգալի է, կըսպանեք որ աւելի համարձակ ըլլայ և աւելի անխնայ իջեցունէ իր զաւեչտի հարուածները այլատարածներու կրօնակին և երեսին:

Դիմել՝ Առ Տիրան Փափագեանի Yeldiz Tabia Varna (Bulgarie)

ՔՐՈՆԻԿ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար կոմս մուրադիէֆ յանկարծամաճ եղած է: Առաւօտեան սուրճը խմելու և կերակուրին կսպառէ եղեր: և ահա նստած ամուսնէն վար կիյնայ ու մէկ երկու րոպէէն հոգին կաւանդէ:

Իր նախորդը իշխան Լօպանով Եւս յանկարծամաճ եղած էր: ու ըսին թէ սրտի ցաւէն պատճառած էր մաչը. սակայն ընդունուած ընդհանուր կարծիքն էր թէ թիւրաւորում էր. նոյն կարծիքը կայ նաև կոմս մուրադիէֆի յանկարծամաճ լինելուն մասին:

Կըսուի թէ կոմսը հակառակ էր Ռուսիոյ որևէ պետութեան մը ընդհարուելուն և պատերազմի բռնուելուն. ու երկրին պատերազմաւէր կուսակցութիւնը իրենց բաղձանքին առջև կեցող այդ մեծ արգելքը վերցունելու նպատակաւ զայն թունաւորել տուած է:

Մուրադիէֆ կոմսի մաչը, կը կարծուի թէ, աշխարհի քաղաքականութեան վրայ մեծ փոփոխութիւն մը յառաջ պիտի բերէ, որովհետև կը խորհուի թէ Ռուսիոյ պատերազմաւէր կուսակցութիւնը այսուհետև պիտի յաջողի կառավարութիւնը պատերազմի մղելու:

Կոմսը 55 տարեկան էր. ու երկրին ամենէն կարող և զօրաւոր քաղաքագէտը կը համարուէր:

Կ. Պոլսէն Յունիս 25 թուով հեռագիր մը կըլլէ թ Մ. Նահանգաց կառավարութիւնը ուրիշ նոր զեկուցում մը ներկայացուցեր է իր Կ. Պոլսոյ ներկայացուցչին միջոցաւ Օսմանեան կառավարութեան: Հայկական կոտորածներու ժամանակ միտինարաց կրած վնասներուն հատուցում պահանջելով, թէ և զեկուցման ոճը շատ զօրաւոր է. իսկ վերջնագիրն է: Այս նոր զեկուցումը կրկին յապուշ կրթեր է սուլթանը:

Գերմանիոյ Ռայխսթակի անդամներէն մին անցեալ օր ատենախօսութեան մը մէջ ըսաւ «Ռուսուած է որ Գերմանիա պատերազմի անգլիոյ հետ», իբր հաւաստիք իր յայտարարութեան, աւելցուց թէ «Մարտնաւային յաւելման պիտանէ քուէարկեցիք ճիշտ այն պատճառաւ որ կառավարութիւնը մեզի հասկացուց թէ ի մօտոյ պատերազմ պիտի ունենանք անգլիոյ հետ. թէ այդ պատերազմը ծովի վրայ պիտի ըլլայ և թէ այդ պատճառաւ մեր նաւային զօրութիւնը աւելցունելու ենք»:

Գերմանիոյ կայսրը տարիներէ ի վեր էր սր ամէն ճիգ կը թափէր նաւային յանձնարար պիտանէ քուէարկել սուլթանի Ռայխսթակին, ու չէր յաջողեր, այդ պատճառաւ նոյն իսկ լուծեց Ռայխսթակը և յաջողներուն նոյն սպանալքը ըրաւ, սակայն միշտ առանց արգելիքի, ու կերեւի թէ Ռայխսթակի անդամին յիշեալ յայտարարութիւնը կառավարութեան մէկ խաղն է. և որ մեծ յաջողութիւնով նպատակը ի գլուխ հանած է միամիտներու քուէները խելով:

Չինաստանի կացութիւնը ամենածանր տագնապի հասած է: Ստոյգ տեղեկութիւններ կը պակսին: Օգնութեան միջոցաւային բանակ մը որ Անգլիացի ժողովակալ Մէյմուրի հրամանատարութեան տակ կը գտնուէր, իբր 2500 հոգի և որ Փեքինի օգնութեան կը փութար Չինացի կանոնաւոր զօրքերէն և Պօքսերներէն պաշարուած է, Մ. Նահանգները և Ռուսական բոլոր մեծ պետութիւնները նորանոր զօրազուեղեր ճամբայ կը հանեն դէպի Չինաստան: Չինաստանը քաղաքակիրթ աշխարհի հետ ուղղակի պատերազմի մէջ է: Չինաստանի փոխարքանները Եւրոպական պետութիւններուն և Մ. Նահանգաց դիմեցին զինադուլտուակելով. սակայն ամէնքէն ալ մերժուածի պատասխան ստացան: Ոչինկիթնի կառավարութիւնը Չինաստանի գործերուն կացութիւնը այնքան ծանր կը գտնէ, զր կը խորհի Բանկրեք արտակարգ նիտի հրաւիրելու: Կըսուի թէ Փեքինի և Թենցինի մէջ միայն 400,000 է բազկացած բանակներ կան՝ որոնք 400 կտոր նորագոյն տեսակէ թնթանոթներ ունին: Մինչև հիմա միայն Ռուս գինուորներու կրած վնասը 400 կը հասնի: Նշաններ կան թէ ուրիշ կարգ մը զաւառներու մէջ ալ նոյնպէս չինացիները ոտքի պիտի ելլեն, և որոնք զսպելու համար առնուազն 100,000 է բազկացած միջազգային բանակ մը զրկել հարկ է:

Վ.Ա.Բ.Ե. ՓՈՐՁԱՌՈՒ

Սափրիչ մը կուգուի Յարատե գործ և գահացուցիչ վարձք քիչ շատ տեղական լեցուն և սովորութիւններ զիտոցող ըլլայ. արքեցող շըլւայ, մանրամասնութեանց համար դիմել Յովհաննէս Թաքէոսեանի:

148-150 Central Street, Worcester, Mass.

“ՀԱՆՏԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ,”
ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Իր Գրական ու գիտական յօդուածներէն զատ հոն կը գտնենք Հայ Գրականութեան, Լեզուաբանութեան, պատմութեան և Հնախօսութեան վերաբերեալ ընտիր ուսումնասիրութիւններ. և ազգային լրագրաց և պարբերական հրատարակութեանց մէջ երեւցած կարեւոր գրութիւններու վրայ քննադատական տեսութիւններ:

Նիւթերու բազմազանութեամբ և և ուսումնասիրութեան լիակողմանի հիմնութեամբ, կրնանք զայն կոչել ինքնագրագրական տեսչացոյններու սարնուուն:

Տարեկան բաժնեգինէ՝ 10 Ֆրանք. (2 Տօլար) Դիմել՝ Հետևեալ Հասցէին:
A la Redaction de La Revue
“Hantess,” Vienne (Autriche)
VI¹/₂ Mechitharistengasse 4.

Բ Ա Ն Ա Ս Ե Ր

Հ Ա Ն Դ Ե Ս

Հնախօսական Պատմական Լեզուաբանական և Բնական և Հրատարակութեան տարեկան չորս գիրք (հրէք ամիսը անգամ մը) Տնօրէնութեամբ Կ. Յ. Բասմաճեանի և աշխատակցութեամբ ազգային և օտար արևելագիտաց:

Բանասէրը իր խիտ գնահատելի պարունակութեամբ յանձնարարելիէ ամէն բանասէր Հայու: Ինչպէս են ծաղիլաւէտ դաշտերը մեղուին, անանկէ՛ բանասէրը բանասէր մտքերու Համար:

Բացուած է՝ Բ ըդ. տարւոյ բաժանորդագրութիւնը: Տարեկան 20 Ֆրանք (5 Է) վեցամսիս 10 Ֆր. (§ 2) մէկ գիրքը 6 Ֆր. (§ 1, 20): Դիմել՝ Բասմաճեան

112 Bd. Rechechouart Paris
Ամերիկայի գործակալն է՝ Պ. Յակոբ Գասպարեան, որուն միջոցաւ ևս կրնան ստանալ: Հասցէն P. O. Box, 95 Station A, WORCESTER, MASS

Ի Ր Ա Ւ ՈՒ Ն Թ

Լուրջ և իր անունին Համեմատ խղճամիտ լրագիր, կը պարունակէ քաղաքական գեղեցիկ տեսութիւններ և ազգային առատ լուրեր, կը հրատարակուի շաբաթը երկու անգամ:

Տարեկան բաժանորդագրին է 12 Ֆր. Հասցէ.

REDACION DE JOURNAL,
Iravounk, Varna, Bulgaria
Ն Ե Տ Ա

Վէպ Պուլկարական յեղափոխական կեանքէն. կը պարունակէ խիտ արտաշարժ պատկերներ և կը ցայտէ յեղափոխական ոգի արծարծելու կայծեր:

Գին 50 անթիմ (10 սէնթ) գիմել Իրաւունքի համարագրութեան վերի Հասցէին:

ՆՈՐ ԲՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ
Կ Ա Մ

Հաւաքածոյ հին և նոր Ազգ. երգերու:

Մասն առաջին. գին 2 Ֆր. Յրկորդ մասը մամուլ տակ է:

Հասցէ:
A. ZARPHANELIAN,
Varna, Bulgaria.

ՊԱՏՈՒ ՀԱՆԻՆ ՄՈՒՐ ՀԱԿԸ

Թատերգութիւն եօթը արարուած իրական կեանքէն առնուած և օրինելի գործ մի է, իր ամբողջութեամբ խիտ հետաքրքրական ու շահեկան:

Մտանալ փափաքողք գիմելու առ Պ. Զարփանէնեան վերի Հասցէով:

Շ Ա Ւ Ղ

Հանդէս Կիսամսեայ Գրական Գիտական և Ազգային: Նոր սկսուած է հրատարակուի և խոստմնակի Հասցէ.

DR. H. S. PAPAZIAN,
Varna, Bulgaria.

Ա Ձ Դ

Կը ծանուցանենք Հայ Հասարակութեան թէ՛ Պոսթոնի Թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԵՆԵՐ ԶԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ:

Յանձնարարութիւնը կը կատարուի փութով և ինամով:

ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ՍՍՄՈՒԷԼԵԱՆ
ԱՐԱՄ ԱՍԳԱՆԱԶ

Մեր Հասցէն է
Tyler Grocery Co.
113 Tyler St. Boston Mass.

ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պօլոյ, Վենետիկի, Մ. Մամուրեանի և Տիգրիսի Բաֆֆի լեռնաբանութեան կարգադրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատուններէ ալ գրքեր բերել տալու միջոցները ձեռք բերած ըլլալով կուգամ գրասէր Հայրենակիցներու ծանուցանել թէ իրենց փափաքած գրքերը սովորական գնով կարճ ժամանակի մը մէջ՝ բերել տալու պատրաստ են. քիչ ժամանակ վերջը մեր քով արդէն պահեստի պիտի ունենանք ամէն ժողովրդական գրեանց շարք մը:

Փափաքողաց գրացուցակ կը ղրկենք: Մեծ քանակութեամբ գրեանքներու մասնաւոր գնով կը կեննք:

Դիմել Ս. ՊԵՏԵՆՍԿԻ
390 P O Box
LOWELL MASS

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՕՇԱՐԱԿ

Յիւնեցի հիւրանոցութեան արևելեան սովորութիւնը: Այցելուներու մատուցանելու ամենաբարձր և զովացուցիչ ըմպելիքն է ԱՐԵՒԵԼԵԱՆ ՕՇԱՐԱԿ. որ իր համրի, հոտին և գոյնին կողմանէ կը գերազանցէ բոլոր այլ տեսակ ըմպելիքները գաւաթի մը պող ջուրի մէջ. դադար մը ընշարակ կը բաւէ. մէկ քօրթը կարծէ 40 սէնթ իսկ մեծ քանակութեամբ գնողներուն 100 ին 20 գեղջ կը կեննք: Ստար քաղաքներէ ելած ավազանները փութով կը կատարուին. անդափութեամբ ծախքը գնողաց վրայ է:

Դիմել Նպարավաճառ Վ. Յ. Բարակեանի 45 Էքսչէնջ սթրիտ Ուոսթըր Մէս:
45 EXCHANGE STREET,
Worcester, Mass.

ԲԱՉՄԱՎԷՊ

Հանդիսարան Ամսագիր Ազգային, Գրական, Գիտական, Լեզուաբանական ու Հնախօսական գիտելեաց այդ Հայկական ճոխ Մասունքը և Ետեմարանը ինքնօգնութեամբ զարգանալ ու զօրանալու գաղափարը կրնանք կոչել:

Տարեկան բաժանորդագրին է 10 Ֆր. Հասցէն է.

REDACION DE LA REVUE,
Pazmaveb,
St. Lazar Venis, Italie.

ՀԱՒԱՐԱՄՈՑ


Հայ Ժողովրդական երգերի Ձայնագրեալ

Երաժշտարար Հայրենակիցներու մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք այս ըզձայնի հրատարակութեան, որ կուգայ մեր ճաշակը նրբացնելու, մեր գագացումները ազնուացնելու, մեր բարքը ներդաշնակելու մէջ իր թանկագին դերը կատարելու. անոնք որ կուզեն Հայկական Ժողովրդական երգեր անել նօթաով այս գործէն պիտի օգտուին ուստի նուազողներու Համար մասնաւորապէս յանձնարարելի է և շատ նկատմաներով ամէն Հայու քաջախիտներին ու գնահատու արժանի:

Պիտի բաղկանայ 6 մեծադիր տետրակներէ: Առաջինը արդէն լայն տեսած է. Բաժանորդագրութեան պայմաններըն են.

6 Տետրակին Համար § 6¹/₂
3 „ „ „ § 3¹/₂
1 „ „ „ § 1,25

DIRECTION des CHANTS ARMENIENS
5 Rue Chateaudun,
Paris, France.



THOMAJANIAN BROTHERS,
52 Southbridge St.,
Worcester, Mass.

Ամերիկայի Հայ գաղթականութեան կուգամք յայտարարել, ամէն գիւրութիւն կընծայենք նաևերու տոմսակ տալու մասին. դէպի Թուրքիա կամ Եւրոպայ. մասնաւորապէս կը յանձնարարեմք (Յրէնջ Հայն) կոչուած գիծն որ ամենապատուական և ամենաարագ նաևերը ունի և ամէն Հինգշաբթի առաւօտեան ժամը 10 ին ճամբայ կերեն նիւ-եորքէն: Նաև դրամ կը փոխադրենք Մարսէյլ Հեռադրութիւն նաւակաւ. նոյնպէս եւրոպայի բոլոր գլխաւոր քաղաքները, որք կը գանձուին առանց որ և է ծախուց և դժուարութեանց. մեր առն ապահովութեան մասին Հայրենակիցք արդէն տեղեակ են անցեալ 10 տարուան մեր ընթացքէն: Նաև կենաց, Վիբաւորուելու ամենամեծ լուս ընկերութեանց գործակալութիւնը ըստանցեմք ևմք. ստոր Համար այ օտարներու գիմելէ առաջ մեզի գիմեցէք. նամակներու պատասխանները մեր անմիջական ուշադրութեանը կուտամք ինչպէս սովորութիւն է:

ՉԻԵՍՍՍՎԱՅԱՌ, ԵՂԲԱՐԹ ԹՈՎՄԱՃԱՆՆԵԱՆ
52 Սուուեթ Պրիճ. Փողոց Ուոսթըր Մէս
3 տօլարի Ապրանք գնողաց ալ լուսանկարը մեծցնել կուտամք ձրի.

Ր Ա Յ Յ Ի Ր

« ԴԱՒԻԹ-ԲԷԿ » Ա. Բ. Կ. Հատոր վերջարանով և « ԿԱՅԾԵՐ » Բ. Հատոր լիակատար:

Իւրաքանչիւրի բաժանորդագրին է 5 Շիլին:

Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս կուղարկուին բաժանորդներին որպէս « ՍՍՄՈՒԷԼ » եղաւ:

Բաֆֆիի միւս երկերը ունենալ ցանկացողները պիտի ուղարկի դիմեն մեզ: Մեզինց կարելի է ստանալ նաև իրիմեան Հայրիկի, Ծերենցի, Պետրոս Դուրեանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ: Հասցէ.

MME. RAFFI,
47 Uxbridge Road,
London, W., England.

Ա Ն Ա Ն Ի Տ

Հանդէս Ազգային, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բրդ. տարուայ Բաժանորդագրութիւնը:

Հասցէ
ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ
6 Place de L'odeon
Paris



Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
ՄԵՏՈՒՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՐՈՒՔԱՆԱԿ
Ս. ՍՄՊՈՒՐԱՅԱՆ

Նիւ-եորք 509 2րդ. Ավինո

Տեղական և Արևելեան բազմատեսակ նպարեղներ, լաւագոյն տեսակ ընդեղներ, եղանակին Համեմատ բանջարեղներ և առօրեայ թարմ միս: Հայկական պանիր փաւուտը 12 սէնթ, մեծաքանակ գնողաց 10 սէնթ. Ուստի պա՛տուական Պղլուր և Մեծած փաւուտը 4 սէնթի մեծաքանակ գնողաց 3¹/₂: Զիթապտուղ (գէյթու) փաւուտը 10 ս. մեծաքանակ՝ գնողաց մասնաւոր գեղջ կը կեննք, 5 փաւուտի քէն սալայի Հասը 26 սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ Հայ սը: Մեր քով մ'ըտ պատրաստ կայ Հայկական ամեն տեսակ պարանքներ, ա՛ղը դրուած եսփրաղ, ընտիր կորկոտ, անթալ Հալվասի, կանանջ գէյթու: Զէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մա՛քաւունի լօթու մ տեսակներով, ոսպ աղցուած կամ շաղցուած, սու՛մախ, սիսեռ Պօլոյ իւշար պանիր, լէպլէպի շաքա՛րի տեսակներով, քիմիօն, անասն, պատ՛ սուական խունկ. աղւոր ալիւրէ Հաց 2 Հասը 5 սէնթ, և այլն... Նամակով ե՛րգած յանձնարարութիւնք փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր յատուկ կառքով: վճարումները կանխիկ են և ոչ ապաւիկ:

Նաև կը ծախեմ Պաճիեա, Սայսերիի Պ ստորմա և Եւսեռու:

ԿԱՐԻՈՐ ԱՁԴ

Ճաշակի յարմար պատուական ապուխտ (Սայսերի Պատրուայ) կը պատրաստեմ. գինն է՝ փաւուտը 36 սէնթ. վաճառման կեդրոնատեղին:

S. ՍԷՄԵՐՃԵԱՆ
113 TYLER ST BOSTON MASS